

սանեն, բորոտք սրբին եւ աղքատք աւետարանին, ալլովք. զորս ի բազում վայրի ջնջեցաւ՝ խղեցաւ եւ ստորասուզեցաւ փանաքւոյս յիշատակ իրր ընդոտնեալ եւ զլացեալ յոմանց, թող թէ բանիւք զէմ յանդիման, ի տեղիս տեղիս ըստ զիպման, ոչ համարեալ արժանի որպէս եւ եմս տառապեալ եւ թարմատար: Զի՞նչ քեզ բազմուշմիգ յուչ առնել նախագուշակու թիւն ճշտի կատարօնութեան՝ Եղիազար կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք սրբոյ աթոռոյն էջմիածնի գրեին իմ, որ ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգեայ: Միով բանիւ ակորժակաւ սրտի աշխարհակալք զգաւառ եւ զնահանգ ձրէին խօշամէտիճոց, ո՞ւր քոյն. թէպէտ եւ զմեր հաւուց ննջեցելոցն չմոռանաս զմարդասիրութիւն: Ողջ պիտէր Գեորգիոս տեսեալ զքեզ ի գահդ Լուսաւորչին. Աղայն իմ է՝ գոչելով ճեմեալ խրախուսէր ի մէջ բազմականաց, եւ ի մատրան ժողովոյն վկայ բերելով զնիկողիմոսին բան՝ թէ յԱստուածուստ իցէ առն (պարսպ): Կարծիք տայ ինձ լըքեալ թողուլ, զնոցայն ձագերացս զխնամդ խղել, որ ի բնէ էր. քո էր քեզ ի թուղթ եւ զիր առեալ յորդորէիր ի սէր, շարժէիր ի գութ՝ Հալածական Եղիազար, նուաստ Եղիազար, ի փղձկանս արգելու զիս ի յիշատակութիւն ձեր, լալով գրեմ. թո՛ղ զհաւուց մերոց՝ այլ եւ Իմս Երեմիաս ասելով ի գիր եւ ի լեզու: Եթէ միայն լինէր քո ընդ հաւուց մեր զսէր, այնքան ոչ տրտնջայի, եթէ միայն լինէր նոցա ընդ քեզ: Ապա անջնջելի ուրոյն կտակաւ կոթող կանգեալ է իմն ընդ քո, յառաջ քան զԵրուսաղէմ եւ պայաղի եւ զափքէհասի եւ ի հալածմանդ ընդ Ճէլալեաց եւ զարձեալ յերուսաղէմի, եւ զարձեալ ի Բերիոյ, եւ զարձեալ ընդ Ապրօիւ քո էր բնաբան նամակիդ եղեալ զիմաստն Սողոմոնի թէ Մի՛ մոռանար զերախտիս բարեկամին քո. Սէր ոչ իւրք սպառի՝ զառաքելոյն բարբառէիր: